

ւիկներն ու իրենց արտասահմանի արժանաւոր հետեւորդները ուսուսական օրինատացիա ունին իսկ Հ. Յ. Գաշնակցութիւնը եւ հայ ժողովուրդի բացարձակ մեծամասնութիւնը բոլշևւիկեան Ռուսաստանի օրինատացիան հունին եւ այդ կողմէ բարիք մը չեն սպասեր :

Հայոց ազգային քաղաքական կեանքի մէջ, հայ բոլշևիկները եօթը տարուան պատմութիւն մը ունին :

Այս անցնող 7 տարին խոստումներու եւ երազային ծրագիրներու ցուցադրում մը եղաւ եւ յանդեցաւ «վերաշինուրեան», անշուշտ հայ բոլշևիկներու բմբոսումով :

Ես մէկ կողմ կը թողում բազմաթիւ տարբերութիւնները, որոնք բոլշևիկները հայ հաւաքականութենէ կ'առանձնացնեն : Մէկ կողմ կը թողում բազմաթիւ քաղաքական սխալներ, եւ ինչու չէ՞, դաւաճանութիւններ, որոնք հայկական վերածնունդի ճանապարհը փակեցին, առայժմ : Ձեռ գրադիր նաեւ այն ընդհանուր եւ հասարակ տեղիք դարձած պատճառաբանութիւններով, որոնք Ռուսաստանի մեծութիւնը, ուժը, ցորեանի դաշտերը եւ Բազուի նաւթահորերը քով քովի կը բերեն, բոլշևիկեան Ռուսաստանի օրինատացիան անհրաժեշտ եւ հաճելի դարձնելու համար : Այս բոլորը աչքիկապուկի կը ծառայեն, հիմնական ա մտահոգող խնդիրները սքողելու համար :

Ի՞նչի մէջ կը կայանայ հայ բոլշևիկներու Սորհրդային Ռուսաստանի օրինատացիան, եւ ինչո՞ւ Հ. Յ. Գաշնակցութիւնը հակառակ է այդ օրինատացիային :

Հայ բոլշևիկներու ուսուսական օրինատացիայի գրգապատճառը դարձեալ Թուրքիան է : Պատէ պատ բացատրութիւնները կատարեալ անճարակութեան արդիւնք են :

1917 թ.ի հոկտեմբերեան բոլշևիկեան յեղափոխութեան օրերուն եւ անկէ յետոյ, հայ կեանքի հրատապ խնդիրն էր Հայաստանի հողերու սահմանադժուժը եւ միացումը : Այս ծանրակշիռ խնդիրը հայ հասարակական կեանքի ե'ւ անտեսական ե'ւ քաղաքական դժբախտի էր : Կովկասեան Հայաստանի մէջ, Գանձակի, Ղարաբաղի, Ախլբալաքի եւ Նախիջևեանի հարցերն ամենասուր կերպով հրապարակ դրուած էին : Տաճկահայաստանը զբաւուած էր

ուսուսական բանակի եւ հայ կամաւորներու կողմէ, ու հայեր հաստատուած էին հան՝ անկախ հայրենիք մը կազմելու համար : Թուրք-թաթարները թշնամի էին հայոց, եւ Ասորէյ-Ղանի ու Թուրքիոյ դադտնի եւ յայտնի միացեալ ուժերը օղակած էին հայ ցեղը, արդիւնքը անոր քաղաքական-ազգային վերածնունդը :

Հայ բոլշևիկները հայհոյելով Հ. Յ. Գաշնակցութեան մինչեւ այդ թուական անոր ունեցած ուսուսական օրինատացիայի համար, այդ ճգնաժամային օրերուն կ'ընդգրկէին բոլշևիկեան Ռուսաստանի օրինատացիան, պահանջելով Տաճկահայաստանի անկախութիւնը, կովկասեան Հայաստանի ամբողջացումը, եւ գրաւականներ կը խնդրէին ժողովրդական Կոմիտարներու Սորհրդային աշխարհքի չորս կողմ ցրուած հայութիւնը հայրենիքի մէջ հաւաքելու, հայոց ազգային ինքնորոշումը կատարեալ դարձնելու համար :

Այսպիսով հիմքը կը դրուէր բոլշևիկեան Ռուսաստանի օրինատացիային, որ, սակայն, հազիւ երկու ամիս անցած Բրեստ Լիտովսքի դաշնագրի ստորագրութեամբ օղբ կը ցնդեցընէր Սորհրդային կառավարութեան հայանրպասա դեկրետներն ու բազմաթիւ խոստումները :

1919-ին ուսու-թրքական յարաբերութիւնները մտած էին բարեկամական հունի մը մէջ, դադանի եւ յայտնի դաշնագրերով : Բացայայտ էին բոլշևիկեան Ռուսաստանի ճրգտումները, որոնք ըստ ամենայնի կը դուրսդիպէին թրքական շահերուն, եւ Հայաստանի ու հայ ժողովուրդի զոյւթիւնն իսկ կը դառնար չնչին արժէք մը Ռուսաստանի աչքին : Ասկայն, հայ բոլշևիկները շարունակեցին մնալ ուսուսական օրինատացիայի տեսակէտի վրայ, միայն երակէտ ունենալով իրենց կուսակցական համամտութիւնը, առանց անդրադառնալու այդ ընթացքի ստրկական բնոյթին : Եւ այդ օրինատացիան ուսուսական կարմիր բանակը հասցուց Ղարաբաղ-Չանդեզուր, Նախիջևեան, Ղազախ, իսկ թրքական բանակները մտցուց Կարս, Ալէքսանդրապոլ եւ Սուրմալու :

Հայաստանը կորսնցուց իր անկախութիւնը եւ հողերու մեծ մասը : Հայ ժողովուրդը բնագոյով եւ դիտակցօրէն, այդ ժամանակա-